

Թեմա 5. ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Ողջույն, շարունակելով ֆինանսական կրթության մեր դասընթացը այսօր խոսելու ենք խնայողությունների մասին:

Խնայողությունը եկամտի այն մասն է, որն անհատները, տնային տնտեսությունները կամ կազմակերպությունները պահպանում են իրենց ընթացիկ ծախսերն ու ֆինանսական պարտավորությունները կատարելուց զատ:

Խնայողությունները ծառայում են բիզնեսի բազմաթիվ նպատակների:

Խնայողությունները գործում են որպես պաշտպան՝ անկանխատեսելի հանգամանքների, տնտեսական ցնցումների կամ չնախատեսված ծախսերի դեմ:

Խնայողությունը պարզապես փողը մի կողմ դնելը չէ, խնայողությունները նաև աճի հնարավորություններ են տալիս: Որպես ձեռնարկատեր՝ դուք կարող եք, օրինակ, օգտագործել կուտակված խնայողությունները՝ ներդրումներ կատարելով նորարարության, բիզնեսի ընդլայնման, նոր տեխնոլոգիաների ներդրման, կամ աշխատակիցների վերապատրաստման մեջ:

Բիզնեսի աշխարհը դինամիկ է, այնպես որ ռիսկերն անխուսափելի են: Խնայողություններ ունենալը թույլ է տալիս մեր ընկերություններին դիմել հաշվարկված և մեզ համար ընդունելի ռիսկերի:

Ինչպես քննարկել ենք նախորդ տեսադասում, ֆինանսական պլանավորման ժամանակ գործ ունենք երեք հիմնարար հասկացությունների հետ՝ եկամուտ, ծախս և խնայողություններ: Եվ քանի որ այս երեքը փոխկապակցված են, ստացվում է, որ խնայողությունները պլանավորելիս պետք է ուշադիր վերլուծել անցյալի ծախսերը և կանխատեսել ապագա կարիքները:

Դիցուք մենք կարողանում ենք խնայողություններ անել, իսկ ի՞նչ տարբերակներով է հնարավոր է դրանք պահել.

Քննարկենք դրանցից մի քանիսը ավելի մանրամասն.

Առաջինը խոսենք բանկային ավանդից:

Ավանդը մեր կողմից ավանդային պայմանագրով սահմանված ժամկետով բանկ ներդրվող գումարն է, երբ պայմանագրի ժամկետի ավարտին բանկը վճարում է մեզ տոկոսագումարներ՝ պայմանագրում նախատեսված չափով և կարգով: Դա նշանակում է, որ մենք որոշակի ժամկետով վստահում ենք մեր խնայողությունները բանկին, իսկ բանկը ժամկետի ավարտին վերադարձնում է տնտեսած միջոցները՝ դրա դիմաց վճարելով տոկոսային եկամուտ:

Տարբերվում են ավանդի երկու տեսակներ՝

- Ցպահանջ և
- Ժամկետային:

Ցպահանջ ավանդի դեպքում բանկը պարտավորվում է վերադարձնել գումարն ամբողջությամբ՝ մեր առաջին իսկ պահանջի դեպքում:

Ժամկետային ավանդի դեպքում ի սկզբանե սահմանվում է ավանդի վերադարձման կոնկրետ ժամկետ: Այս ժամկետային պայմանավորվածությունը, սակայն, «պայմանական է», քանի որ միննույն է, մենք կարող ենք հետ վերցնել ավանդի մայր գումարը բանկից ցանկացած պահի: Այս դեպքում բանկը պարտավորվում է վերադարձնել ներդրած գումարն ամբողջությամբ, սակայն, հնարավոր է, որ ավանդի դիմաց տոկոսագումարները վճարվեն մասամբ կամ ընդհանրապես չվճարվեն, կամ հաշվարկվեն այլ՝ ավելի ցածր ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:

Հիշեք, որ ավանդների ներգրավման համար բանկերը գտնվում են մրցակցության մեջ, ուստի անհրաժեշտ է մինչև ավանդի ներդրման որոշման կայացումը ուսումնասիրել, թե որ բանկը ի՞նչ տոկոսադրույք է առաջարկում:

Տոկոսի մեծությունը պայմանավորված է նաև ժամկետայնությամբ: Որքան ավելի երկար ժամանակահատվածի համար է ներդրվում ավանդը, այնքան ավելի բարձր է տոկոսային եկամուտը: Ավանդների առաջարկները ևս կարող եք համեմատել ու ձեզ ամենահարմար տարբերակն ընտրել www.fininfo.am կայքի միջոցով:

Իսկ ի՞նչ առավելություններ ունի ավանդը.

- Նախ, մեր խնայողությունները պարբերական եկամուտ են բերում:
- Մեր խնայողությունները երաշխավորված են և ապահով, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենքով գործող Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը երաշխավորում է Հայաստանում գործող բանկերում ֆիզիկական

անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրված ավանդների հատուցումը որոշ սահմանաչափով: Միայն Հայաստանի Հանրապետության դրամով ավանդի դեպքում երաշխավորվում է մինչև 16 միլիոն ՀՀ դրամի վերադարձ, իսկ միայն արտարժույթով ավանդի դեպքում՝ մինչև 7 միլիոն ՀՀ դրամ:

Քննարկենք օրինակով: Եթե հենց այսօր սկսեք ամսական 10.000 դրամ խնայել բանկում 10%-ով, ապա յուրաքանչյուր տարի կունենաք գումարի հավելած: